

ՀԱՉԱԿ

Տ Է Ռ Օ Ր

ԵՒ

ԵՐԿՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.

—

Հայ յիզախոսական տէ՛նօր — և սարսափը տիրած է սուլթանին. տէ՛նօր — և սարսափի մէջ է Բ. Գուռը. տէ՛նօր — և ծակ ու ծուկ են մտնում սուլթանի բազմաթիւ լրտեսները, և ահարեկած է ամբողջ տաճկական պաշտօնական մարմինը: Ահա ինչ երբէք երազած չէր խեղճ Մեծ Թիւրքը... Ինչպէս. նա, սուլթանը, սարսափո՞ւմ է մի քանի տէնօրիսա երկտասարդներից, որոնք ու՛լլուլէրի կրակն են արձակում նրա արբանեակների վրայ, երկտասարդներ, որոնց ոյժն իրենց յանդուգն արիւթիւնն է ու անձնութեանը Սուրբ Գործին: Այդ օրն է ընկել սուլթանը: Անտարակոյս, նրա սուլթանական քաջութիւնը նրան ուրացել է և հնարած առասպելների չարքն անցել: Բայց նա — ինքնակալ կայսր, նա, որի գահին ոտների շուրջը սարդոստայնի նման չարված են բիրաւոր զօրքեր, նա, որի երկրուն գահը պաշտպանված է միլիոնաւոր տաճիկ ժողովրդի սգիտութեամբ, — նա վախենո՞ւմ է զեւ մի քանի տէնօրիսաներից... Ինչ ծագր...

Այո՛, դա կլինէր լսի մի դառն ծաղր դէպի սուլթանը, եթէ իրականութիւնն այդքան սարդ լինէր: Այլ ներկայ սրայմաններում դա մի բոթալի նշանակ է Թիւրքիաի վերաբերութեամբ և այդ բոթը տվողը մի քանի տէնօրիստներ չեն, այլ մէկ ամբողջ կազմակերպված յիզախոսական մարմին, որի անձնուրաց զինուորների թւումն են և այն տէնօրիստները: Բանը նրանումն է, որ սուլթանի կառավարութեան զիմաց կանգնած է այսօր Թիւրքիայում մէկ ու ըրիչ կառավարութիւն ևս, խորտակիր պարանքով, ընդարձակ ու հաստատ կազմակերպութեամբ և անհամեմատ աւելի կանոնաւոր ու կարգապահ, քան սուլթանի կառավարութիւնը: Շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ առաջին անգամ այդ երկրորդ կառավարութիւնն օրինակելի յիզախոսական շարժումով գործնականապէս յայտաբարեց իր գոյութիւնը և այն օրից ամենքին սլարդ եղաւ, որ նա մեծ ու եզակի

և միևնոյն ժամանակ վճռական դեր պիտի խաղայ Հայ ժողովրդի և Թիւրքիաի հակառակորդների վերաբերութեամբ: Այդ երկրորդ կառավարութիւնն իր որոշումների մէջ ցոյց է տալիս համարձակ վճռակաւութիւն, իր գործունէութեան մէջ ապացուցանում մեծ հաւանք ու տոկոսնութիւն և իր ընթացքի մէջ — տակտ, հետեւողութիւն, իրերի դրութեան հասկացողութիւն և անձնուրացութիւն յանուն ընդհանուր բարօրութեան: Այդ երկրորդ կառավարութիւնը Հնչակեան Կուսակցութիւնն է իր Կենտրոնական վարչութեամբ, որ հայերիս մէջ առաջին անգամ ծածանեցրեց Յեղափոխութեան կարմիր գրչակը, որի վրայ հրավառ տառերով արձանագրված է այս նշանարանը. — «Ժողովրդի ազատութիւն ու բարօրութիւն: Իրաքանչիւրին և ընդհանուրին հաւասար իրաւունքներ ու հաւասար պարտականութիւններ: Կործանո՞ւմն ամեն տեսակ բռնութեան»:

Ահա՛ այդ երկրորդ կառավարութիւնն է, ահա՛ այդ զրոշակն է, որ սարսափեցրել է սուլթանին ու նրա արբանեակներին:

Այդ երկրորդ կառավարութիւնն այսօր ներկայացուցիչն է Հայ ժողովրդի և գործադրիչը նրա արդար կամքի: Այդ զրոշակն այսօր Հայ ժողովրդի զրոշակն է, որ բարձր ու յայթական կերպով պահած ունի Հնչակեան Կուսակցութիւնը: Այդ երկրորդ կառավարութիւնն ու այդ զրոշակն այսօր պատերազմ են յայտարարել սուլթանի կառավարութեան դէմ, կոչված լինելով փրկելու Հայ ժողովրդին, այն ժողովրդին, որ տաճիկ բռնակալն իր կառավարութեամբ առաջ և այսօր շարունակ թալանում, խողխողում, մորթում է Հայաստանում: Այո՛, Հայ ժողովրդի համար այսօր դժոխք է դարձել ամբողջ Հայաստանը: Սուլթանի կառավարութիւնը զեւ չանսնված տէնօր է գործադրում այնտեղ. — նա անգուսպ կատաղութեամբ կոտորում է Հայ ժողովրդին թէ՛ իր զինուորների, թէ՛ Թիւրքերի և թէ՛ վայրենի ցեղերի ձեռքով, մատակարարելով սրանց մեծաքանակ զէնքեր. հրդեհը շարունակ լսւում է Հայ ժողովրդի ցորենի զէզերը. ամբողջ նահանգներ կան, ուր մի եզ,

մի կով, մի ոչխար անգամ չէ մնացել — բոլորը յափու առկված են: Այս հայ ժողովուրդը արխանայից աչքերով կրճատմ է իր տկոսները, աղետալի նախագուշակութիւն. ներք պատաստմ են նրա կուրծքը, որի խորիւրդից խուլ մանչիւնով գուրս է պրծնում սարսափեցուցիչ խօսքը — սո՛վ, սո՛վ...

Այս ժամանակ հատափարութեան այդ սոսկալի տէնորին միակ պատասխան կարող էր լինել միմայն հայ յեղափոխական տէնորը: Գանակին գանակ պէտք է գէ՛մ գնելը: Անձնապաշտպանութեան իրաւունքը սուրբ է: Հնչակեան Արտակցութեան սուրբ պարտականութիւնն էր սույն ժամանակ հատափարութեան գէ՛մ գործ գնել իր սեփական յեղափոխական տէնորը: Նա սկսում այդ գործը և թշնամին չփոխվեց ու սարսափեց, տեսնելով հայի մէջ այնքան ոյժ, ինքնաճանաչութիւն ու մարդկային պարտականութիւնը կատարելու ընդունակութիւն: Նա սկսում պատմել հայ ժողովուրդի ու Ասորի Գործի թշնամիներին: Նա սկսում իր տէնորական գաղափարները լրտեսներից ու դատաւաններից և թիւրք հատափարութիւնն իր ընթացքով անընդուն նրան կհասցնէ այն աստիճանի, որ նա իր սարսափելի կրակը կուղղէ և նրանց գէ՛մ, որոնք պատճառն են հայ ժողովուրդի թշուառութեան և դրան կոտորելու հրաման տվողներն են:

Յուլիս Տառնեհինգից յետոյ շուրջ կորցրած հատափարութիւնն անտակի հալածանքներ սկսում գործադրել հայերի գէ՛մ և հայ յեղափոխական տէնորը երևան եկաւ: Նա յայտնում է իրեն շարունակութիւն հայ յեղափոխականների գործունէութեան, մի գործունէութիւն, որ մինչ այսօր պատկվել է աջողութեամբ: Հընչակեան Արտակցութեան ոյժերը, հակառակ հարիւրաւոր ձերբակալութիւնների ու նորանոր աներկակայելի խռտութիւնների, աճում են արագարար: Այս գա այն պարզ պատճառով, որ նա կենդանի ու օրինակելի ընթացքով գործադրում է արդարեւ կամքը հայ ժողովուրդի, որն իր կողմից հանդիսանում է զօրեղ յենարան այդ Արտակցութեան և նրան նորանոր գինւորներ հասցնող: Քանի որ հայ ժողովուրդը գոյութիւն ունի, այդ Արտակցութիւնը գոյութիւն կունենայ և աւելի ու աւելի սուր ու յանդուգն կերպով կմղէ իր մեծ ու արդար մարտը: Այս ժամանակ ու Բ. Գուռն անկարող են նրան ոչնչացնել, այլ միայն թո՛ղ գիտնան, որ հայկական վառօթի հոտ է կանգնած օդի մէջ... Թո՛ղ չկարծեն նրանք, թէ իրենք տարափոխից զրկված՝ փառած ու հնացած խաբէրայութիւն են: Ներսիս և յանձնառնողների կատակերգութիւնները ներկայացնելով՝ մեզ կրկնապատկեն: Այն յանձնառնողների մեղքը և ո՛չ սույն ժամանակից ցատումն ու կախաղանք մեզ չեն չեղիլ յեղափոխական արդար ճանապարհից: Ահա արդար

մարդիկ ենք և ո՛չ սարսափներ: Ահա երբեք չենք հրաժարվիլ մեր արդար պահանջներից և մեր արդար ձեռք, առմաներից ախմար յանձնառնողների պատրաստած թանի համար: Ահա իբրեւ մարդ, իբրեւ բաղադրացի, իբրեւ ժողովուրդ պահանջում ենք այն, ինչ պէտք է ընդհանուր լրարօրութեանը և այդ ձեռք բերելու համար մենք կմարտնչենք մինչև մեր արեան վերջին կաթիլը:

ՆԱԽԱԿ ԹԻԻՐԲԻԱՅ.

(Անկական թղթակցից)

Կ. Պոլիս 19 սեպտեմբեր 1890.

Տէնորական սոսկալի պայքար մը սկսած է մայրաքաղաքիս մէջ՝ հայ յեղափոխականաց և տաճիկ կառավարութեան մէջ: Յեղափոխական Գաղափարները կը շարունակէ արձակել իր ահաւոր և արժանաւոր մահապաշտներն: Յեղափոխական տէնորները յանդուգն և հարազատ կերպով կը փութան գործադրել Գաղափարի Վճիռները. մասնիկը կընկնին գետին արխանաթաթախ կամ զգայազուրկ կընկնեն գետին և կը փչեն իրենց կեղտոտ ու սև հոգին. մահապաշտը կընկնին ի ձեռս ժողովրդեան, սարսափ և սարսուռ կազդեն վատերու և դատաւաններու: Կատափարութիւնն ահարկ և մոլեգնեալ իւր վերջին ճիգը կը թափէ ժողովրդեան այս հասարակ շարժումն ու հրդեհը խեղդելու և մարելու. յիմարարար կը յուսայ տակալին թէ պիտի յաջողի իւր աստիճանական կազմակերպութեամբ, իւր բռնադատական տնօրինութեամբ իւր մեծաթիւ և անվերջ ձերբակալութեամբ մաքառել Յեղափոխական Արտակցութեան գէ՛մ և խախտել դայնի Բայց Հնչակեան Արտակցութեան կազմակերպութիւնն՝ ունենալով հանդերձ իւր զոհերն, այնքան ամուր, այնքան հսկայ կերպով կաճի ու կը զօրանայ, որ իրաւամբ, կարհամարհէ ու կը ծաղրէ ճարահատ կատափարութեան խելաւր ջանքերն և յուսահատական վերջին փորձն: Հնչակեան Արտակցութիւնն իրաւամբ կը վայելէ այսօր լիակատար ժողովրդականութիւն: Ժողովրդեան զայրոյթն ու կատաղութիւնն այն աստիճան տատակացաւ այս շարժում մէջ տեղի ունեցած խառնութեանց և ձերբակալութեանց պատճառաւ, նորա տկարութիւնն և եռանդն այնքան ցնցուեցաւ ու կենդանացաւ տնտեսական գործունէութեան շնորհիւ, որ մօտապէս և սարսափելի պայթում մը անխուսափելի կերելի... Տեղական այլ ժողովուրդը և օտարազգիք անգամ ափսոսանքով ու հիացմամբ կը դիմեն հայոց այսքան յամու գործունէութիւնն և այսքան յեղափոխական սարսափարկու ոյժն ու կազմակերպութիւնը: Այժմ որ կը պարտաւորի խոտովանել թէ կատափարական գաղանի կազմակերպութիւնը (ս.ս.թ. Կ.ա.ն.ք. պ.ա.շ.տ.օ.ն.ե.ա.յ.ք. լ.ր.տ.ե.ս.ք. գ.ա.ե.ա.ճ.ա.ն.ք. մ.ա.տ.ն.ի.չ.ք...) շատ ու շատ անփոր և տկար կը զըստ. նուրն Հայկական Յեղափոխական գաղանի կազմակերպութեան առջև... և անհերքելի է, որ այս կապէս յեղափոխական մեծ յաջողութեան մէջ:

Ամերժանութեանց լինելէ յետոյ, փութում յայտնել թէ այս անգամուտն ապրել տեղեկութիւնք հետի են շարաթական եղելութեանց ամբողջակալով հաւաքածոյ լի. նիւլ. ձերբակալութեանց և գէլաբերու շատութեան և ընդհանրապէս յարաբերութեանց դժուարութեան պատ.

ճառաւ, եղիտ թեանց թերեւս փորձազօյն մասն միայն պիտի կարենամ հաղորդել:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՆՈՐ

Յանուն Հնչակեան Կոտակցութեան Յեղափոխական Դատարանին հետեւալ պաշտօնական Վճռագիրը կը հաղորդեմք:

«Վ ճ ո ա գ ի ր»

«Յեղափոխական Դատարանը այս անգամ ևս մանրազնին քննութեամբ ստուգելով և հաստատելով թէ 1) Ս ու ը ք ի ա ս ք ա հ ա ն ա յ ն ու զղակի մասնակցութիւն և գործակցութիւն ունեցած է Տ ա ճ ա տ վ ա ր զ ա ա լ ե տ ի մասնութեանց և գաւաճանութեանց մէջ. թէ 2) փաստարան խ ա չ ի կ Պ ե տ ր ո ս ե ա ն ը մասնիչ և վարձկան լրտես է և յայտնի դատաճան բնագլխով Ս ու ը ք ի ա ս ք ա հ ա ն ա յ ն և նկատելով որ ըստ պատժական օրինաց տրամադրանքովեան՝ աշղպիտեաց արժանազոյն վարձադրութիւնը Մ Ս Հ է, միաձայնութեամբ այդ երկու գաւաճաններն ի մահ գատապարտեց: Այդ վճիռն երբ անմիջապէս գործադրվեց ան:

Հայ Յեղափոխական Կոտակցութեան
Մասնախումբ Կ. Պոլսոյ»

Տ. Ս ու ը ք ի ա ս ի ս ա լ ա ն ու թ ե ա ն փ ո Ր Ճ Ը:

Տ. Սարգիսի վրայ Յեղափոխական Դատարանի արձակած վճիռը գործադրելու սահմանեալ տէ ու օր ի ս տ ր տեսնելով որ նա ինքզինք մեծ զգուշութեամբ կը պահէ և դուրս չելեր, մի քանի ատուտ մեծաւ ջնքմեանով, թեամբ Գումգարուի Մայր Եկեղեցին կը յաճախէ. վերջապէս ամսոյս 14 ին ուրբաթ առաւօտ ժամերգութեան միջոցին Սուրբատ ներկայ կը գտնուի. հոն մինչ մատնիչ առաջերեկն Աւետարան կարդալէ յետոյ զէս ի գասը կը յառաջանար, սարսափարկու պաշտօնեայն կը հանէ ձեռքովէրը և առաջին հարուածը կարձակէ. իսկոյն գետին կը փռուի գաւաճան քահանայն որոյ վրայ երկրորդ հարուած մ'ալ պարպկով կը մեկնի թէնօրիսը կարծեւ յով թէ տարտած էր իւր պաշտօնը... Բայց տէրաէրը սարսափէն ուշաթափած և ինկած էր, որով և հարուածք վրիպած էին... Թէնօրիսը աջ ու ձախ նետելով մահալծոյն օրինակները կը յաջողի փախչիլ բաղմոթեան մէջէ, կամ մանաւանդ՝ ժողովուրդն անխտով կերպով կը գիտէ այս սուրբ ոճիրը և իրեն ճամբայ կուտայ (Չանա, որ երեւթ)... այսպիսով եկեղեցիէն դուրս ելնելով՝ հետախորցնաւ կը փախչի... Մի քանի վայրկեանի մէջ եկեղեցին կը լնցուի խուռն բաղմոթիւն մը հետաքրք. քիւններու. ժողովրդեան զէնքին վրայ յակածաց իւրեանց կը յայտնուէին հաճութեան և զոհուակութեան նշաններ, ոտիկանք՝ ափշած և չուարած՝ վրայ հասան, գողալով կարգացին մահալծիւն, եղիտ թեան մանրամասնութեանց տեղեկացան և տեղեկագրեցին տո առ լթանն Մատնիչ առաջերեկն զարկահար և մեռելատիւր՝ չէր կարող ստից վրայ կանգնել. երկու թեանքն օգնելով և ոտիկաններէ չըջալատեալ՝ այնպէս տարուեցաւ Երոտագնատունը ուր գործեալ մարեցաւ... Մեծ տալուորութիւն թողոյ այս երկրորդ զէնքն արքունի պալատան մէջ. սուրբանը

կատապաճ ու մոլեղեալ՝ ինչ բնկիւր չէր գիտեր. մեծ շփոթութիւն տիրեց բոլոր պալատականաց մէջ որով որ հասարակ կը կարծէին թէ վերջին խառնութիւնք և պալտի խոտածուք զհայերը թուլցուցած ու ջլատած են: Գիշ վերջ Գում կանչուեցաւ պատրիարքական փոխանորդ Աղանեան (Կերէն վարդապետ)՝ որուն ըսուեցաւ որ ինք պատասխանատու է այս զէնքին համար, քանի որ գաւաճան նախարարութեան վերջին թէ գ. ք. է. ի. ի. ն հաւանալն պատրիարքարան պատասխանատու պիտի ճանչցուէր սեւ զէնքի համար որ պատահէր Արամեանորէ. մանց Յանձնաժողովոյն իւր պաշտօնը լրացնելէ յառաջ Պատր. փոխանորդը պարզապէս պատասխանեց թէ ինք հրաժարած է շարքէրէր թի Օրէն ի վեր Գումգարուի թաղը այս սոթիւ գործեալ պատրիարքան մէջ գրուեցաւ: Այս սոթմութեան փորձն, թէ և անյաջող, նոր գաւաճալ և զաւ գաւաճաններուն և նոր ուժգին տալուակ մը կատաւարութեան. երեսին Հայոց մայր եկեղեցին կրկին անգամ օրհնուեցաւ. սուրբ վառօդոյ խնկարգութեամբ...

Փ ա ս տ ա ր ա ն խ ա չ ի կ Պ ե տ ր ո ս ե ա ն ի
ս ա լ ա ն ու թ իւ ն ը:

Փաստարան խաչիկ Պետրոսեանի զէնք Հնչակեան Յեղափոխական Դատարանի արձակած վճիռն գործադրելու պաշտօն ունեցող թէրթօրիսը՝ բաւական ժամաւ նակէ ի վեր նորա ետեւն կը չըլլեր. բայց չէր կրնայ իրեն հանդիպել վերջապէս խաչի երկուշարթի օրը հայ թէրթօրիսը կուտէ նոյն օրը կատարել իւր ստանձնած պատասխանութիւնը, և իրօք նոյն գիշերը ժամը կէսին կը պատահէ մատնիչին ի Թօի Գում, Թաքէճիւր թաղը՝ Միտհատ փառայի ամարանոցի և Տալուտ փառազօրանոցի մօտերը. հոն Չընար կոչուած ծառի մը տակ զրուարան մը կայ որոյ առջև կը չըջապայէր գաւաճան լրտեսը մի կողմն ունենալով թուրք երիտասարդ մը և միւս կողմը՝ իւր մի հոմանիւն Յանգուզն թէրթօրիսը կը յառաջանայ անխտով և ձեռքը նամակ մը կուտայ: Փաստարանը կանգ կառնու, նամակը կը բանայ և կը կարգայ իւր մահալծիւրը... Կարգացած միջոցին թէրթօրիսը կըսէ. «Կարգա՛ որ գիտեսա թէ ինչի՛ համար կը մեռնիս, անգիտակցարար շմեռնա՛» Զայս կըսէ և բէժըլլիլի երկու հարուածներ կը պարպէ որով թէ և կը գիտին, բայց մահացուցիչ չեն լինել, որոյ վրայ գաւաճանի հարուածով մը փորը կը ճեղքէ և աղիքները դուրս կը թափէ, չուրջը մահալծիւրի թղթի կը ցրուէ և այնուհետեւ մեր կարիճը կը յաջողի փախչիլ և աղաթիլ Թաքէ կատաւարութեան ճիւղներէն: Այս սոթկալի տեսարանին տկանատես հոմանուհին կը նուաղի, իսկ թուրք երիտասարդն կը փախչի. թէրթօրիսը սորա ալ ետեւն երկու գնտակ կարձակէ, բայց կը վրիպի: Ենմիջապէս բաղմոթիւն կը խոնի, կը հասնին ռահ ոտիկանք և կը տեսնեն կիսամուս մատնիչն գետնատաւ, բաժ, ու՛ թ ու գողով կը կարգացուին գաւալծոյ թղթիկ ներք. ոտիկանութիւնը կը ձերբակալէ զէնքին. փայլը գտնուող բոլոր մարդիկն, ընդ այր և ընդ կին, Թիւրք երիտասարդը կը ներկայանայ և կը յայտարարէ թէ կը ճանաչէ սուրբ ոճիրն հեղինակը՝ ի՞թէ զէնք տեսնէ. բայց ներկայից մէջն ոչ որ կը նմանի իրեն. ռա որդէն հետացած էր... Կիսամուս մարմինը պատգարակի մէջ գնելով տուն կը փոխադրեն. բոլի կը բերուի և լայնաւ. բայց մէրը կը կարէ, բայց կը յայտարարէ թէ կեանքէն յոյս չկայ. և ինք երեք ժամէն կը փշէ վերջին շունչը:

Չորեքշաբթի իւր թաղման տրապիտիւթիւնը կը կատարուի խիստ անշուք կերպով:

Այս վերջին դէպքն իւր կատարեալ յաջողութեամբն ահ և սարսափ տարածեց մայրաքաղաքին մէջ. չփոթու թիւն, յուզում, զայրոյթ, խրախոյս կը տիրեն քստ իւրաքանչիւր գաղափարգիւ: Առաւարտութիւնը դադանացած իւր զայրոյթէն ու կատաղութենէն՝ աջ ու ձախ հանդիւսւածն կը ձեռքաւորէ. հարիւրաւոր հայեր ձերբակալուած են այս 3-4 ասուրց մէջ, որոց մի առ մի անունը գրել և ներդրածութիւնն ընել անկարելի է: Ամբողջ հայ թաղերու մէջ ոստիկանք և լրտեսք — այս վերջնոց մէջ զեռ կը զանաւն հայեր — կը վիտան. երեք հայ քովէ քով չեն կարող քալիլ առանց կասկած հրաւիրելու: Խուներ ու խանութներ կը լրտեսուին: Խուղարկութիւնք անթիւ են: Միով բանիւ թրքական համայն ոստիկանական կազմակերպութիւնը իւր բոլոր զորութեամբ հայոց դէմ հանուած է և հայերը զսպելու կը նկրտի, բայց ի հարկէ ի զ ու ռ: Մեծ է մեր վստահութիւնը հայ յեղափոխականաց անձնուրաց գործունէութեան և առ հասարակ հայ ժողովրդեան յարատեւ հաստատամտութեան վրայ որով չափի ընկճի և ամենայն եռանդեամբ պիտի շարունակէ յեղափոխական մարտն որոյ յաղթանակի ժամն մօտեցած է...

Ա ն ի շ ի ս ա ն ու թ իւն.

Նախորդ թղթակցութեամբն յայտնեցի խառն Ժողովոյ հրաժարականին միւրմուրն: Այդ Ժողովէն, պատրիարքական փոխտեսնորդն անցեալ երկուշաբթի օրը ստիպողապէս ի նիստ հրաւիրեց յիշեալ ժողովոյ բոլոր անդամները. անոնցմէ մի մասն յարգելով այդ հրաւերն՝ որչեալ օրն, չորեքշաբթի, ներկայ գտնուեցան ժողովոյ սովորական նստին: Նիստը բացուելէ յառաջ հարկ գառուեցաւ կարգալ նամակ մը որ նոյն առաւօտ հասած էր պատրիարքարան: Նամակն Հնչակեան Առաջնորդութեան կնքով կնքեալ էր և բացորոշ կերպիւ կը պահանջէր կրօնական և քաղաքական Ժողովոյ և պատրիարքական փոխտեսնորդի անմիջապէս հրաժարումը: Պատկառանքով կարգացուեցաւ այս պահանջագիրը. խորհրդաւոր և հանդիսաւոր լուծութեամբ մը ժողովականք յաջորդաբար ձեռք առին ու կարգալոյն զայն, յետոյ առանց նիստ կազմելու՝ համակերպեցան Յեղափոխական Վարչութեան կամաց և իւրաքանչիւր օր լիկ մեծիկ մեկնեցաւ ժողովարանէն...

Կաթոլիկ պատրիարք Ալեքսանտր Կաթոլիկի և իւր անդամներն անհրաժեշտ սկսած են մեր հայ կաթոլիկ եղբարց մէջ յուզում և զրգիւ պատճառել: Ստացելի աղբիւրէ մեր առած տեղեկութեանց նայելով՝ կաթոլիկ հայոց լուսամբտ երիտասարդութիւնն կծու բողբոջէր մ'ուղղել է Ալեքսանտրն որոյ մէջ թուելով իւր հակադէպին ուղղութեան անհրաժեշտ ապացոյցներն ու հետեւեալները՝ կը պահանջէ իւր հրաժարականը՝ հակառակ պարագային մէջ զինք սպաննելու սպառնալիցով: Կը լսեմք նաեւ թէ չորս յանդուգն երիտասարդներէ բաղեւ. ցեալ պատգամաւորութիւն մը ներկայացրել է իրեն և նոյն յայտարարութիւնն ու սպառնալիքն կրկին է բերանացի Նաեւ զրոյց կը պտըտի թէ կաթոլիկ պատրիարքին իւր նախկինպէս խոստանալով սուլթանին երթալուն յաջորդ օրը հայ կաթոլիկաց աթոռանիստ եկեղեցւոյն մէջ՝ հոգեւոր պաշտօնէն կատարուած միջոցին՝ ժողովրդեան մէջն մին աղաղակել է թէ «Աստուածամեծ պատկերը վերցուցէք և տեղը սուլթանին պատկերը դրէք»:

Նայ լրտես և թ եր ա հ ա ա տ ք.

Յիսուսի շափ հայ լրտեսք հրաժարած են իրենց անարգ

պաշտօնէն՝ վախենալով հայ յեղափոխականաց վրեժխնդրութիւնէն: Շատ մը հայեր որոնք իրենց երկդիմի ընթացիւր հայ Յեղափոխական Վարչութեան աչքին կասկածելի երեւած էին, խնդրագիր կը հասցընեն յիշեալ վարչութեան՝ յորս կազմուածն որ իրենց կենաց խնայուի, խոստանալով նիւթապէս և բարոյապէս նպաստել Հնչակեան Առաջնորդութեան և ապագային միշտ հաւատարմապէս ծառայել ազգային շահուց: Այս խոստութիւնք ևս յայտնաբարբառ կը վկայեն թէ որքան բարձրացած է հայ յեղափոխականաց վարկն և թէ ինչպէս ամենէն անտարբերք և թերահաւատք անգամ հաւատք կը գոյացնեն յեղափոխական գործին վրայ, մինչդեռ մասնիչք և դատաճանք կը գոյան ու կը սարսընին Ռեզանդիտի բռնաւորն կատաղութենէ կը մոլեգնի ու կը փրփրայ. արդէն օսմանեան մեծագոյն և ամբողջ գրահաւորին «Երթողութիւն» 572 մարդերով ճարտնի ծովուն մէջ ընկղմելն ի վեր, սուլթանին վրայ մտային խռովարարան երեւոյթներ կը տեսնուին. օրինակի համար, երբ կը լսէ առաջին անգամ գրահաւորին խոստանալիքն և ժողովապետ Օսման փաշայի ևս ծովամղին լինելն, խեղճ ինքզինք իրաւունքէ ծովու և ցամաքի գերիխան ակտը կարծելով՝ իր ազէ ո վ մը կը հրամայէ որ յիշեալ փաշայի զինակը գտնելով իրեն բերեն... (.)

Ձ եր ր ա կ ա լ ու թ իւն.

Ինչպէս ըսի, ձերբակալութիւնք հարիւրներով կը հաշուին Գումգարուի և Ալեքի փաշայի կողմերը շատ մը տուններ խուղարկուած են և տանի շափ կնիկներ ձերբակալուած են: Հայ կանանց ձերբակալութիւնք քաջալերիչ նորութիւն մ'է և սարացոյց որ հայ կանայք ևս ազգորոված են յեղափոխական գաղափարներով...

Բերա Աղաճափի կողմը բռնակրկներու բնակարանը խուղարկուած է. ներկայից և բացակայից բոլոր անաւակները բանալով և խորտակելով՝ պարտնակութիւնք աչքէ անցուցեր են, գտնուած մի քանի զենքերն գրաւել են և անոնցմէ մի քանի անձինք ալ ձերբակալել են:

Ըստ կը տրուի մեզ թէ Սուրիանի թէսօրիստը ձերբակալուելով ուղղակի Երբող պաշտը տարուել և հարցաքննուել է և բարրաբոս կառավարութիւնը իրմէն գաղտնիք մ'առնելու համար՝ նորա ձեռք ին մէջ լր ա կ լ ե ց ու ց ե ռ է...

Պերճ.

Իբրև պաշտօնական օրգան Հրչակեան Առաջնորդութեան, յատուկ պատուէրի համեմատ՝ յայտարարում ենք, որ Առաջնորդութեան Գումգարանում ստացված հետևյալ գումարները. — Կ. Պ. քաղաքից մի խումբ երիտասարդներից 30 օսմ. ոսկի. 0. 0. ից՝ 1 օսմ. ոսկի. Տասնեկէսից՝ 20 ֆրան. Պարսկաստանցի Ռազմից՝ 40 ֆր. Միակնից՝ 20 ֆր. Հուրից՝ 20 ֆր. Մի խումբ Օրիորդներից՝ 186 զրուշ. Բոլգարիա Ս. քաղաքից՝ Ալեքսանտր միջոցով մէկ ընկերութիւնից՝ 100 ֆ. Պ. քաղաքում հանգանակած 50 ֆր. Ա. ի միջոցով Ժ. քաղաքից՝ Ռասմոզից 10 ֆրանկ.

Շնորհակալութեամբ ստացանք իբրև նպաստ «Հնչակին» հետեւեալ գումարները. — Կ. Պ. քաղաքից Գ. Գ. ից՝ 6 ֆր. 18 սանտիմ. Մ. Գ. ից՝ 5 ֆր. Պ. քաղաքից Գ. Լ. ից՝ 20 ֆ.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ուղարկել հետեւեալ հասցեով.
Montpellier (France). — M. Beniard. Poste Restante (25)

Ի յոյժն. Հայկական ազատ տպարան.